




570

ℓ I. 4







Ծ Ա Ղ Ի Կ

ՄԱՆԿԱՆՑ

ՇԱԲԱԹԱԿԱՆ ՀԱՆԴԵՍ

Դաստիարակութեան եւ Կրթութեան

ԾԱՂԻԿ ՄԱՆԿԱՆՑԻ կը հրատարակուի ամէն ուրբաթ օր, ի բաց առեալ Յունիս եւ Յուլիս ամիսները: Բաժանորդագիրն է ԿԱՆԻԻԿ, Պօլսոյ եւ գաւառաց համար, տարեկան 50 դանեկան. վեցամսեայ 25 դանեկան, եռամսեայ 15 դանեկան: Այլ երկրաց համար 12 ֆրանկ: Խաբանչիւր թիւը կ'արժէ 50 փարա: Գաւառներէն դրոսմարտի ալ կ'ընկուծուի: Բաժանորդագրութեան համար դիմել առ Տնօրէն—Խմբագիր Միհրան Ասֆանդ, Էսկի Ջապրիէ հասցէի թիւ 61, Նշան Կ. Պէրպէրեանի տնակին:

ՆՊԱՏԱԿ ԵՒ ՈՒՂՂՈՒԹԻՒՆ

Հազիւ ամիս մը բոլորեցաւ յօրէ անտի յորում իմաստունն Գերմանիոյ Կորովի Կայսրըն, իւր գուպարայալթ բանական ահեղաշուք տեսարանին առջեւ գոգցես տկար զգալով իւր անձը, Կայսերական գահոյից բարձունքէն, զգօն մանկավարժի մը հանգոյն, դաստիարակութեան եւ կրթութեան վրայ ճառեց լու ի լու իւր ժողովրդեան, եւ առաջարկեց կրթական նոր ծրագիր, յապահովութիւն Գերմանական մեծագոր ազգին ապագայ մեծութեան եւ զօրութեան: Արդարեւ չեմք զարմանար որ Կայսր մը փութով եւ խնամով ձեռնմերձ կը լինի իւր ժողովրդեան կրթական խնդրոյն. մանաւանդ մեք Թուրքիոյ Հայքս, այնու վր կը վայելենք հովանաւորութիւնն լուսամիտ եւ բարեգութ ՎԵՃ. ՍՈՌԼԹԱՆ ՀԱՄԻՏ ԿԱՅՍԵՐ որ ոչ միայն իմաստուն առաջնորդութեամբ կը վարէ իւր բոլոր հպատակ ազգաց ճակատագիրը, այլ եւ անոնց բարւոք դաստիարակութեան եւ կրթութեանը վրայ հայրական հոգածութեամբ կը հսկէ. բայց զարմանաց արժանի այն իսկ է զի կրթական նոր ծրագրոյ այդ առաջարկութիւնը կ'ընէ

Վեհապետն այնպիսի երկրի մը ուր աւելի բարձր ի գլուխ կը պանծայ Մանկավարժութիւնը քան այլ ուրեք:

Այս մեծ իրողութեան առջեւ՝ որ վայրկեան մը եւրոպական ազգաց կրթական օրէնսդրութիւնն զբաւեց ուշադրութիւնն, ամէն խորհող բնականաբար իւր աչերն դարձուց իւր ազգին կրթական վիճակին վրայ եւ սկսաւ խորհիլ. ուրախութիւն զգաց անշուշտ երբ տեսաւ անդ կրթական այն բարւոք օրէնսդրութիւնը որ առողջ եւ միանգամայն իւր ազգին յատուկ ու պատկանաւոր դաստիարակութեան մը ու կրթութեան մը սահմանը կը գծէր, եւ տիրութիւն զգաց երբ նշմարեց կրթական այն ձախող օրէնսդրութիւնը որ ազգի մը գոյութեան հիմերը կը քանդէ: Ամէն խորհող Հայ եւս անշուշտ թախծալից սրտով նրկատեց թոհն ու բոհր ուր կը ծփայ մեր արգի կրթական վիճակը: Տակաւին չունինք կրթական օրէնք մը որ որոշ գոյն մը տայ մեր ազգային դաստիարակութեան ու կրթութեան. տակաւին կանխամուտ սովորութիւնը (routine) կը սիրէ մեր դաստիարակութեանց եղանակաց եւ դասադրոց մէջ, տակաւին մեր ուսանող մանկուոյն եւ

պատանեաց կ'ուսուցանեմք որ ինչ պիտոյ չէ կամ ի ճահ դեռ ուսանել: Իւրաքանչիւր վարժարան իւր ուսմանց ուրոյն ծրագիրը ունի, անցնիւր ուսուցիչ իւր դասախօսելու մասնաւոր եղանակը, և, զարմանալի բան, մէն մի աշակերտ իւր ընարած ուսումը ուսանելու և գիրքը կարդալու քմահաճոյքը: Արդարեւ ունինք վարժարաններ որք մասնաւոր անհատներու, առանձին խնամակալութեանց և երբեմն կարող տնօրէններու ձեռաց ներքեւ, թէ աստ ի Պօլիս և թէ ի գաւառս, մեր դաստիարակութեան գործոյն մէջ կարեւոր և օգտակար դեր մը կատարած են և կը կատարեն, բայց այնքան սակաւ են նոքա թուով զի չեն կարող մեր կրթութեան տեղեկացնել: Քանի մը ծաղկաւէտ դալարազարդ ովստիսներ կըրնա՞ն միթէ գեղածիծաղ երեցնել տխրատեսիլ և ամայի անապատ մը:

Մեր պաշտօնին բերմամբ մեր Ազգին կրթական վիճակը ընդերկար և ոճով մանր գննելէ յետոյ, ազգային մանկուոյն բարոյական և մտաւորական յառաջդիմութեան արգել ու խափան եղող շատ մը պատճառներ տեսած եմք. այնպիսի պատճառներ որոնք յաճախ դաստիարակութեան համար Ազգին ի զուր վատնել տուած են և դեռ կուտան մեծագումար դրամներ: Այս պատճառներն են, Ա. Գալոցական ծրագրոց անպատշաճութիւնն մեր նիւթական եւ բարոյական վիճակին հետ. Բ. Լաւ դասագրոց պակասութիւնը եւ դասախօսութեանց հին եղանակը. Գ. Մեր ուսանողաց, ի նիւթ եւ ի մասալ հասակէ, օտար մասեմագրութեան չափազանց յարումը:

Այս երեք պատճառներէն առաջնոյն վերայ ուրիշ առթիւ պիտի խօսինք: Այժմ ունինք խօսիլ Բ. և Գ. պատճառներուն վրայ որք առաջիկայ Հանդիսին նպատակին եւ ուղղութեան հետ մեծ սուղութիւն ունին:

Մեր վարժարանաց մեծագոյն մասին մէջ, մանաւանդ ի գաւառս, դաստիարակութեանց հին եղանակը դեռ վերահռու յամուութեամբ ի հաստով կը կենայ: Յարգելով միշտ արարժանաւոր բացառութիւնները՝ ներուր մեզ ըսել, որ ոչ սակաւ յազգային ուսուցչաց չեն հետամուտ տեղեակ լինելու նորանոր եղանակաց դասուց աւանդման.

ուստի, թո՛ղ լեզուն և գրականութիւնը, հասարակ ընթերցանութիւնն իսկ, մեր ազգային վարժարանաց շատին մէջ դեռ այնպէս կ'աւանդուի այսօր, ինչպէս կ'աւանդուէր դար մը յառաջ: Լաւ դասագրոց պակասութիւնն ալ ոչ նուազ արգելք մը եղած է ուսանողաց յառաջդիմութեան: Թէ և ունինք ի մեզ խումբ մի ուսուցչաց՝ որ խղճահար ոգւով, գիշերաջան տքնութեամբ թափառելով կը թարթալին ազգային եւ օտար մատենագրութեան արուց մէջ, յարմար և ընտիր դասագիրք կը յօրինեն, եւ ընդօրինակել տալով աշակերտաց կը դասախօսեն, սակայն այս եղանակը թէ դժուարութիւններ ունի ուսանողաց համար, եւ թէ օգուտը սահմանափակուած է այն վարժարանաց մէջ միայն յորս ինքեանք կը դասախօսեն:

Մեր ուսանող մանկտին շատ կանուխ կ'սկսի չափազանց յարիւր օտար մատենագրութեան, և օր մը երբ մեկնի վարժարանէն կ'աշխատի իւր թանգարանը ձոխացնել օտար մատենագրութեամբ: Այսօր գրաբար և աշխարհարար ձոխ մատենագրութիւն մը ունինք ուր գրեթէ ամէն ազգաց և ամէն դարու աւագ մատենագիրք մեր լեզուաւ կը խօսին մեզ: Եւ սակայն Հայ ուսանողն աւնոց գրեթէ գաղիերէն լեզուաւ կը ծանօթանայ, եթէ կը հասկնայ այդ լեզուն, կամ գիւրագնի սանաւով ընագրին ամբողջ գաղիերէն թարգմանութիւնը կամ կարդալով նորա հատուածները գաղիերէն կամ անգղիերէն գրական կամ գիտական հանդիսից մէջ որոնք աշնանային տերեւներու առատութեամբ կուգան կը թօթալին Եւրոպայէն մեր երկեւ ուսանողաց ձեռացը մէջ: Բանանք գրադարանը մեր ուսանողներէն միոյն, և պիտի զարմանանք երբ տեսնենք անդ Հոմեր, Վիրգիլ, Միլտոն, Քսենոփոն, Տատիկոս, Կուլինտոս, Կիկերոն ևլն. գաղիերէն բարբառով և կամ երբ տեսնենք խուրձ մը գաղիերէն գրական կամ գիտական հանդիսից որոցմով կը տեղականայ նա գրական և գիտական հրաշակերտից ընտիր ընտիր հատուածոց, մինչդեռ գաղափոր իսկ չունի թէ մարդկային հանճարոյն այդ գրական հրաշակերտներն թարգմանուած են ի Հայերէն գրաբար կամ աշխարհաբար, և սակայն փոշիք և ձճիք կ'ուտեն կ'սպառեն զանոնք Վենետիկոյ և Վեննայի

Միթարեան լազմարդիւն Հարց գրատանց մէջ կամ Հայ գրաւթնառաց քով:

Թերեւս առարկուի թէ գրարար են նոքա և կամ սուղ. անհիմն առարկութիւն. միթէ աւելի՞ դիւրին է ուսանողին հասկանալ զանոնք գաղ. լեզուաւ քան գրարար լեզուաւ զոր աւելի կանուխ լաւ կը հասկընայ քան զգաղիերէնն. իսկ գաղով սղութեան, կը պատասխանեմք թէ ազգի մը մատենագրութիւնը որքան ալ դիւրագնի վաճառուի, դարձեալ անհնար է ուսանողին դրամ բաւեցնել ունենալու համար բոլոր գլխաւոր մատենագրաց երկերը: Երկու կարևոր միջոցք, այն է խնամով յօրինուած Ծաղկաքաղք և ուսանողաց համար մասնաւորապէս պատրաստուած Հանգէսք այլ ազգաց մէջ այդ պէտքը կը լրացնեն: Առ մեզ այդ միջոցներէն առաջինն սկսած է յամաց հետէ և յաջող ընդունելութեան արժանացած, իսկ երկրորդը ցարդ գոյութիւն չէ ունեցած:

Այսպէս երբ օտար մատենագրութեամբ մնած եւ զարգացած ուսանողութիւն մը դուրս կ'ելնէ մեր վարժարաններէն, կ'արհամարուի անշուշտ ազգային մատենագրութիւնը և կը վտանգի ազգային դաստիարակութիւնը միանգամայն:

Մերովստն նպատուելու համար մեր մանկուոյն բարոյական և մտաւորական յառաջելիմութեան, և բառնալու համար, մասամբ իւրիք, այն երկու գլխաւոր պատճառներն, զորս ի վեր անդր բացատրեցինք, ձեռնարկած եմք ահա հրատարակել սոյն Հանգէսն, ձեռնտու օգնական ունենալով մեզ այն բարոյական և մտաւորական ուժերն որոնք Հայ ուսուցչութեան և մատենագրութեան փառքն ու պարծանքն են և առանց որոց անհնար պիտի ըլլար մեզ յանդգնիլ հրատարակութեան այսպիսի Հանգիսի մը՝ որ իւր նոր ուղղութեամբն կը յուսամք թէ պիտի արժանանայ մեր ազնիւ ուսուցչութեան եւ ուսանողութեան համակրանաց:

Հանգէսս պիտի պարունակէ 1. Լեզուի, գրականութեան և գիտութեան դասերու շարք մը որք կ'աւանդուին երկրորդական վարժարանաց մէջ: Երեք կարգերու եմք բաժնած սոյն դասերն, որք պիտի երևին Տարրական ընթացք, Միջին ընթացք, և Բարձրագոյն ընթացք բաժանմանց ներքեւ, փորձ և հմուտ ուսուցչաց ձեռօք պատրաստուած:

2. Ծաղկաքաղ հատուածներ ազգային հեղինակներէ առնուած կամ օտար մատենագրութեան վարդմանուած. 3. Հանգիսիս հրատարակութեան օրէն սկսեալ, ի լոյս եկած դասագրոց վրայ համառօտ քննադատութիւններ: 4. Կրթական, մանկավարժական, լեզուաբանական, գրական և գիտական յօդուածներ և տեսութիւններ: 5. Գաղիերէն լեզուի վարժութեան համար ընտիր հատուածներ, հանդերձ բացատրութեամբք և հայերէն թարգմանութեամբք:

Հանգիսիս Տնօրէն-Սմբագիրը իւր խորին շնորհակալութիւնը կը յայտնէ բոլոր այն ազնիւ ուսուցչաց որք իւրեանց համակրութիւն և թանկագին աշխատակցութիւնը չը զլացան իւրեանց տրուել պաշտօնակցին և քաջալերեցին զինքն իւր այս ձեռնարկութեան մէջ որ նպատակ ունի զարգացնել և մշակել Հայ մանկուոյն սրտին մէջ Բարուոյն, Ճշմարտին և Գեղեցիկին զգացումները:

Երախտագիտութիւնը նաև պարտք կը դնէ իւր վրայ մասնաւորապէս շնորհակալ ըլլալ ակտնաւոր դրագէտ և ուսուցիչ Մեծ. Ռէ. Թէոս Էֆէնտի Պէրպէրեանի, այն մեծանունութեան համար որով բացաւ Նա իւր բոլոր ձեռագիր ընտիր դասագրոց ճոխ գանձարանը իւր խոնարհ սանուն առջև, յօդուած Հայ ուսանողութեան և ի զարգացումն նորնձիւղ դեռափթիթ Հանգիսիս:

ՄԻՀՐԱՆ ԱՍԲԱՆՁ

→→→→→

ՏԱՐՐԱԿԱՆ ԸՆԹԱՑՔ

—

ԱՌՈՂՋԱԲԱՆՈՒԹԻՒՆ

—

ԱՌԱՋԻՆ ԽՕՍԱԿՑՈՒԹԻՒՆ

—

Ի՛նչ է առաջարկուելին

Տղաքս, կարգալ, գրել և հաշուել սորված էք. ասոնք ձեր կենաց մէջ ամէն օր պէտք պիտի ըլլան ձեզ: Դեռ ուրիշ բաներ ալ սորված էք, զորօրինակ քիչ մը աշխարհագրութիւն, քիչ մը պատմութիւն, և շատ դո՛ւ էք ձեր այդ սորվածներէն. քանզի ցանկալի է գիտնալ թէ ի՛նչպէս կազմուած

է երկիրս որուն վրայ կ'ապրիմք և թէ ինչ դէպքեր պատահած են ժամանակաւ :

Բայց բան մը կայ որ այս ուսմանց չափ օգտակար է, և որոյ առաջին բառն չգիտէք դեռ : Այս բանն, որոյ վրայ պիտի խօսակցիմք ի միասին, ձեր ԱՌՈՂՋՈՒԹԻԻՒՆՆ է :

Առողջ էք դուք, և շատ պարզ բան մը կը համարիք զայս, քանզի դեռահաս ու զօրաւոր էք : Բայց չէք գիտեր թէ ինչ բնեւոր է քաջառողջ մնալու համար, ԱՌՈՂՋՈՒԹԻԻՒՆՆ ՊԱՋԵԼՈՒ համար :

Աղէկ գիտեմ թէ ինչ կը խորհիք հիմա : Իւրովի կ'ըսէք. — Փաջառողջ մնալու համար, մէկ միջոց մը միայն կայ, ա՛յն է հիւանդ չըլլալ, բայց այս բանը մեր կամքէն կախեալ չէ : Առողջութիւնը, հիւանդութիւնը կուգայ կամ կ'երթայ. բայց մենք չեմք գիտեր թէ ինչո՛ւ և ինչպէս : Ա՛լ աղէկ երբ Աստուած առողջութիւն տայ մեզ : Ա՛լ գէշ՝ երբ ցաւ զրկէ. պէտք է յանձնառու ըլլալ ցաւուն, քանզի ուրիշ կերպ չեմք կարող ընել :

Այսպէս կը մտածէք ահա, և կէս մը իրաւունք ունիք. կէս մը միայն :

Այո՛, ճշմարիտ է, մարդ միշտ չլինար զերծ մնալ հիւանդութենէ : Բայց ճշմարիտ է նաև թէ ցաւեր ու արկածներ կան որոցմէ կրնամք խոյս տալ, երբ կերպը գիտնամք : Խորհեցէք քիչ մը և շուտով պիտի հասկնաք ըսածս :

Կը յիշէ՞ք սրտաբեկութիւնն զորս անցեալ տարի կրեցինք մեր գիւղին մէջ երբ, Սահակ աղբարը, ջուհակն, և իւր կինը յանկարծակի մեռան՝ թունաւոր սունկ կերած ըլլալուն համար : Եթէ գիտցած ըլլային աղէկ տեսակ սունկը գէշ տեսակէն զանազանել, դեռ մեր մէջ պիտի ըլլային անո՛նք, բարի մարդիկը :

Եւ ձեր ընկերը, Արշամ, ինչո՞ւ բացակայ է այսօր ձեր մէջէն : Լաւ գիտէք պատճառը : Անցեալ օր, վազելով տաքցեր էր, քըրտինքն էր մտեր, և ահա միտքն ինկաւ երթալ աղբիւրէն ծարաւն անցունել : Ա՛հ, չա՛ր վայրկեան : Հազիւ մի քանի ումալ խմած էր պազուկ ջրէն, գոյնը նետեց, դողդոջեց, սարսուռ մը պատեց զանի, և ահա երկու շաբաթ է ի վեր է որ անկողնոյ կը ծառայէ, թոքատապէ բռնուած : Եթէ գիտցած ըլլար, ինքն Արշամը, թէ որչա՛փ

վտանգաւոր բան է զով ջուր խմել քրտնածատեն, հիւանդ չպիտի ըլլար. հոն, իր տեղը պիտի ըլլար հիմա, և ըսածներս մոտիկ պիտի ընէր :

Անցեալ ամառ, մեր գիւղէն շատեր հետ-զհետէ հիւանդ եղան ծաղկախոտէ : Դու, Կարօ՛, շատ լաւ կը յիշես այս բանը, քանզի փոքրիկ քոյրդ ա՛յն հիւանդութենէն մեռաւ :

Ուրիշ՞ կուգար այդ ցաւալի հիւանդութիւնը : Ահա ըսեմ ձեզ : Շողեր խաթուն, ջաղացպանին կինն, եղաւ որ գնաց այդ հիւանդութիւնը բերաւ — անշուշտ առանց գիտնալու — քաղաքէն ուր գնացած էր այցելութիւն մը տալ իւր ազգականներէն մէկուն որ ծաղիկ եղած էր. ութ օր ետք նոյն իսկ ինք կը բռնուէր այդ հիւանդութենէն և աղէտը կը տարածէր մեր մէջ : Արդ, եթէ Շողեր խաթուն գիտնար թէ ո՛ր աստիճան տարափոխիկ է այս ախտն, չպիտի գնացած ըլլար քաղաք, կամ թէ բրած պիտի ըլլար ինչ ինչ զգուշութիւններ, եւ Կարօն քոյրը մեռած չպիտի ըլլար :

Դուք ամէնքդ ալ անցած էք այն ճահիճին քովէն որ կը գտնուի մեր գիւղէն մէկ ժամ անդին՝ քաղքին ճամբուն վրայ. բըրինձի մշակութեան համար քանի մի ընտանիք կը բնակին այդ ճահիճին քով. երբեմն մեր եկեղեցին կուգան կիւրակէ օրեր. գիտած էք թէ ինչպէս նիհար, գունատ են այն ընտանեացաւորներ, ամէն ալ տարին տասներկու ամիս ջերմը պակաս չէ անոնց մէջէն : Պատճառն այդ ճահիճն է. դարձեալ այդ ճահիճն է պատճառ որ մեր գիւղին օդն այնքան առողջարար չէ ամառը : Ահա ինչո՛ւ համար Կառավարութիւնը մըտադիր է ցամքեցնել այդ ճահիճը : Այն տեղն այլ ևս պիտի մաքրուի չրջակայից օդը, և բնակիչք աւելի առողջ պիտի ապրին :

(Հետեւողութեամբ Տօք. Էլի Բէօյի)

Գրեց

Դ. Ա. ՄԱՍԹԵԱՆ

(Շարունակելի)

ԱՇԽԱՐՀԱԳՐՈՒԹԻՒՆ

ՄՏԱԽՈՐ ՃԱՄԲՈՐԴՈՒԹԻՒՆ

Պարոններ

Այսօր Ձեզի հետ մտաւոր ճամբորդութիւն մը պիտի ընենք։ Կ. Պոլսէն մեկնելով և միշտ եւրոպական ծովեզերքը քերելով՝ պիտի երթանք Լիվրբուլ։

Ապահով եղիք որ՝ այս ճամբորդութեան մէջ ո՛չ նաւուղէքի պէտք կայ, ո՛չ փոթորիկէ երկիւղ և ո՛չ ալ որ և է դժուարութիւն։ Միայն անհրաժեշտ է բան մը առանց որոյ տեղերնուս չենք կրնար շարժիլ, այն է կատարեալ ուշադրութիւն որպէս զի չմոլորինք։

Ճամբայ ելնե՛նք։

Նախ և առաջ՝ գիտէ՛ք թէ՝ Լոյտի, Ֆրանսական և կամ վերջապէս կարեւոր ընկերութեան մը սուրհանդակ շոգեհաւով ճամբայ կ'եննենք Պոլսոյ նաւահանգստէն և Սարայ Պուրնուէն դառնալով՝ ինքզինքնիս կը գտնենք Մարմարայի մէջ։ Մեր աչաց առջին կը պարզուին Գատը Բէյոյ շէն արուարձանը, Ֆէնէր Պաղչէ, իշխանաց գեղեցիկ կըղզիները (Պուրկազ, Գնալը, Հէյպէլի, Պէօյիւք Ատա) ձախ կողմէն։ Գում Գարու, Եէնի Գաբու, Սամաթիա Հայաշատ գիւղերը՝ եւրոպական եզերոց վրայ։ Ահաւասիկ Եէտի Գիւլէ ուր կ'երեւի մեր Ազգային նորակառոյց և հոյակապ Հիւանդանոցը, դերձանի գործարանը և կաշարանը, Կ'անցնինք Մաքրի Բէյոյ և Սան-Սթէֆանօ ծովեզերեայ և բազմամարդ գիւղերուն առաջին։ Ահաւասիկ Չէքմէճէները, Սիլիվրին։ Եկանք Ռոտոսթօ՝ որու թուրքերէն կ'ըսեն Թէքիրտաղ։ Այս քաղաքին մէջ կը գտնուին բազմաթիւ Հայեր որք կ'զբաղին երկրագործութեամբ և վաճառականութեամբ։ Ունին երկու եկեղեցի՝ Սուրբ Խաչ և Ս. Թագաւոր ուր Աստուածածնայ տօնին Պոլսէն և հեռավոր գիւղերէ բազմաթիւ ուխտաւորներ կ'երթան։ Շատ համբաւաւոր են այս քաղաքին ձմերուկները զորս ամառը բերնի համով կը ճաշակենք։

Հասանք Տարտանէլ (Հէլլէսպօնտոս) որ ունի 60 քիլոմէթրէ աւելի երկայնութիւն և դէմ առ դէմ կը բարձրանան հսկայ և

ամուր բերդերով որք զօրացած են Գրուրի վիթխարի թնդանօթներով։ Պառկած այլ արթուն աւիճներու կը նմանին ասոնք՝ որոց հետ կատակ չըլլար։ Կը յիշէք թէ Քսերքսէս այս նեղուցին վրայ էր որ նաւերէ բազկացեալ և պարաններով իրարու կապուած կամուրջ մը ձգելով՝ իւր միլիոնաւոր զօրքը՝ եօթն օրուան և եօթը գիշերուան մէջ Ասիայէն եւրոպա անցուց։ Դուրս ելնենք Կէլիպոլուէն և ահա ամբողջովին կը տեսնենք Քէրսօնէսեան թերակղզին ուսկից յառաջանալով՝ յաջորդաբար կը տեսնենք Սարոսի ծոցը, Էնոս՝ ուր կը թափի Մարիճա կամ Մէրիճ գետը, Տէտէ Աղաճ ուր կը հասնի Էտիրնէի երկաթուղւոյն մէկ ճիւղը, Լալիօսի խորշը, դէպ ի Հիւսիս կ'երեւի Եէնիճէ որու ծխախոտն խիստ անուանի է։ Ահաւասիկ Գափալա որ նոյնպէս ունի ընտիր ծխախոտ։ Հոս ծնած է Տէփէտէլէնլի առնալուտ երեւելի Ալի փաշան որ կ'աղբէր Մեծանուս Սուլթան Մահմուտ Բ. ի օրով։ Օրֆանօ՝ համանուն ծոցին վրայ փոքրըր նաւահանգիստ մ'է։ Այժմ կը գտնուինք Քալիտեան մեծ թերակղզւոյն առաջ որ ինքն իսկ երեք թերակղզիներով կ'վերջանայ՝ Աքոս կամ Ալմոռոս, Լալիօս և Քասսաղիս։ Ձեք մոռցած անշուշտ որ Դարէհի նաւատորմը՝ Աթոսի հրուանդանին մօտ փոթորիկի մը բռնուելով մեծ փրփու կրեց, իսկ իւր որդին Քսերքսէս ասկից խրատուելով՝ նորա մէջէն ջրացք մը փորել տալով՝ այնպէս անցուց իւր նաւերը։ Յառաջանալք դէպ ի հիւսիս, կը մտնենք Սէլանիկի մեծ ծոցը, Ահաւասիկ Սելանիկ որ եւրոպական Թուրքիոյ ամենէն բանուկ, ամենէ հարուստ և վաճառաշահ նաւահանգիստն է։ Սէլանիկ երկաթուղեաւ կապուած է Սերպիոյ հետ։ Սէլանիկի էն գլխաւոր արտածութիւններն են՝ գինի, ծխախոտ, արմուիք և բամպակ։ Իջնեմք դէպ ի հարաւ և ահա հասանք Յունաստան։ Կ'անցնինք Թեսալիոյ ծովեզերքէն, կը մտնենք Վօլոյի ծոցը ուր կը թափի Սալոմալիա գետը, այս գետին բերնին վրայ շինուած է Վօլօ քաղաքը։ Յառաջանալք դէպ ի հարաւ, Կ'անցնինք Ադալանդայի ջրանցքէն։ Աջ կողմերնիս կ'ուսնենանք Ատտիկէ մեծ ու անուանի թերակղզին, իսկ ձախերնիս կ'երեւի Նեկրոքոնդ կղզին։ Գիտէ՛ք թէ այս կղզւոյն հիւսիսային կողմը գտնուած Արտէմիսիօն հրուանդանին

մօտ նաւային մեծ յաղթութիւն մը տարած
են Յոյնք Պարսից վրայ :

ԳՐԻԳՈՐ ՄԱՐԳԱՐԵԱՆ

Ուսուցիչ

Պատմ, եւ Աշխարհագրութեան

(Շարունակելի)

ՄԻՋԻՆ ԸՆԹԱՑՔ

ՀԱՅԵՐԷՆ ԼԵՁՈՒ

ԲԱՐԵՐԱՐՈՒԹԻՒՆ

Ո՛րչափ աղքատք կան ի մոռացօնս (մոռ-
ցուած են), քանի՛ք՝ առանց օգնութեան և
ձեռնառութեան : Մոռացօնք՝ (մոռացումն)
որ այնու մանաւանդ արժանի են ողբոց,
զի են կամաւ և գիտութեամբ մեծատանց,
և վասն այնորիկ իսկ արժանի պատժոց և
սլաութահասից : Մեկնեցից զոր ասացիս : Քա-
նի՛ բիւրք աղքատաց են որ հասեալ կան ի
յետին տաքնապ տնանկութեան, և զորս ոչ
ուք խորհի սփոփել, զի չիք որ գիտիցէ բզ-
նոսա, և ոչ որ կամիցի գիտել :

Եթէ էր օք տեղեակ կարօտութեան նո-
ցա, սկամայ իսկ օգնէր նոցա, եթէ ոչ առ
գութ սիրոյ, գէթ յամօթոյ և ի սլատկա-
ռանաց : Եթէ տեսանէաք զաղէտս նոցա,
թերեւ յիկնեաք (ամչնալէն կարմրիլ) ընդ
մեր գեղխութիւնս, զաօթի հարկանեաք
(կ'ամչնայինք) զի այնչափ փափկանամք և
գրգիւմ (փափուկ կը մեծնանք), կետաբեաք
(կը մեղադրեինք) զանձինս վասն մերոց ան-
հանգար (անխելք) ծախուց, և յիրաւի մեղս
իմն և ոճիրս համարէաք զայն, այլ զի չեմք
գիտակ (չենք գիտեր) կարօտութեան նոցա,
նա չկամիմք իսկ գիտել, և ի բաց իսկ հա-
լածեմք զնոսա, համարիմք մոռացօնս առ-
նելով (մոռնալով) ազատ լինել ի խղճէ մը-
տաց և որչափ և անհնարին (սասիկ) իցեն
աղէտք նոցա կամք մնամք յանգագալութեան :

Ո՛րչափ ճշմարիտ աղքատք են զորս մեր-
թեմք և անեստ առնեմք (երեսի վրայ կը քո-
ղունք) որպէս թէ չիցեն այնպիսիք : Զառ-
նումք և չկամիմք իսկ առնուլ յանձն աշ-

խատութիւն և Զան հասանել ի վերայ (սե-
ղեկանալ . հասկնալ) թէ իցեն արդարեւ ի
տառապանս : Ո՛րչափ աղքատք իցեն որոց
հառաչանք առ տկարութեանն չհասանեն
յականջս մեր, և որոց ի հուպն չկամիմք
երթալ (մօտենալ) զի մի գնեծութիւն նոցա
լիցեմք : Ո՛րչափ տնանկք թողեալք լքեալք .
Ո՛րչափ վեսահարք (վիշտ ունեցող) ի բանտս .
ո՛րչափ հաշեալք մաշեալք յաղքատանոցս և
յուրկանոցս (բոռններու տեղ), որքանկորաց-
եալք ամօթալիցք ի տունս տունս : իցեն
ևս ոչ սակաւք որոց գիտակ եմք աղքատու-
թեանն, նա չկարեմք իսկ չգիտել կամ մո-
ռանալ զթշուառութիւն նոցա և զվիշտս,
բայց և այնպէս թողումք լքանեմք զնոսա,
և կամ խատութեամբ գնամք (գնալ ընդ ու-
մեք . վարուիլ) :

Քանի՛ք զրկեալ են ի պիտոյից կարի իսկ
կարեւորաց, մինչդեռ մեծատունքս վայե-
լեմք յառատութեան և ի յըլիութեան (չա-
փազանց առասուրբին) ի գելխութեան (ա-
ւելորդ առասուրբին . շոտլութիւն) և յան-
հընարին փափկութեան : Եթէ չգոյր օր դա-
տաստանի, ապա յիրաւի էր սաեւ թէ Աստ-
ուած հաճի իմն և խնդայ (կ'ուրախանայ)
ընդ տառապանս աղքատին տուայսելոյ (տու-
այսիլ . տուալիլ) ի խատութենէ և յանագո-
րունութենէ (անգորութենէ) մեծատանց :

Թարգմ.

ՊՈՒՐՏԱՆՈՒ

Ա. Մ. ԳԱՐԱԳԱՇԵԱՆ

Վերոգրեալ գրաբար հատուածին գաղի-
երէն բնագիրը կը գնեմք աստ առ ի համե-
մատութիւն :

BIENFAISANCE

1. Combien de pauvres sont oubliés! Com-
bien demeurent sans secours et sans assis-
tance! Oubli d'autant plus déplorable, que,
de la par des riches, ils est volontaire, et
par conséquent criminel. 2. Je m'explique :
combien de malheureux réduits aux derni-
ères rigueurs de la pauvreté, et que l'on
ne soulage pas, parce qu'on ne les con-
naît pas, et qu'on ne veut pas les connaître!
3. Si l'on savait l'extrémité de leurs be-
soins, on aurait pour eux, malgré soi, si-
non de la charité, au moins de l'humani-
té! 4. A la vue de leur misère, on rou-

girait de ses excès, on aurait honte de ses délicatesses, on se reprocherait ses folles dépenses, et l'on s'en ferait avec raison des crimes; mais parce qu'on ignore ce qu'ils souffrent, parce qu'on ne veut pas s'en instruire, parce qu'on les éloigne de sa présence, on croit en être quitte en les oubliant; et quelque extrêmes que soient leurs maux, on y devient insensible.

5. Combien de véritables pauvres, que l'on rebute comme s'ils ne l'étaient pas, sans qu'on se donne et qu'on veuille se donner la peine de discerner s'ils le sont en effet! 6. Combien de pauvres dont les gémissements sont trop faibles pour venir jusqu'à nous, et dont on ne veut pass'approcher pour se mettre en devoir de les écouter! 7. Combien de pauvres abandonnés! Combien de désolés dans les prisons! Combien de languissants dans les hôpitaux! Combien de honteux dans les familles particulières. 8. Parmi ceux qu'on connaît pour pauvres, et dont on ne peut ni ignorer ni même oublier le douloureux état, combien sont négligés! Combien sont durement traités! 9. Combien manquent de tout, pendant que le riche est dans l'abondance, dans le luxe, dans les délices. 10. S'il n'y avait point de jugement dernier, voilà ce que l'on pourrait appeler le scandale de la Providence, la patience des pauvres outragés par la dureté et par l'insensibilité des riches.

BOURDALOUE

ԸՆԹԱՅԲ ՇԱՐԱԴՐՈՒԹԵԱՆ

ԸՆՏԱՆԵԿԱՆ ՅԱՐԿ

ՅԱՏԱԿԱԳԻԹ

Նուիրականութիւն և քաղցրութիւն ընտանեկան յարկին, որ իւր մէջ կը պարունակէ մեր սրտին սիրելագոյն էակները: — Սէրն ու անձնուէր խնամքը զօր կը վայելէ անդ մարդ իւր ամէն հասակներուն մէջ... — Բաղդատութիւն այդ սիրոյն այդ յարկին օտար էական բարեկամութեան հետ: — Հաճոյքներն ընտանեաց, և նոցա բաղդատութիւնն արտաքին զուարճութեանց հետ:

Մեր սիրտը, զգայուն այս քաղցրութեանց, յար կը խնդրէ ընտանեկան յարկն, և երբ բաժնուած է անտի կը հառաչէ արտում: Մանուկը դպրոցին մէջ... իւր խինդն երբ կը հնչէ արձակուողի ժամն... Հօր վերադարձն ի տուն յերեկոյն, իւր ուրախութիւնն երբ, յետ օրուան վաստակոց, վերստին կը գտնէ իրեններն:

Ապա քոնի՜ դառն պանդխտին վիճակն: Նկարագրեցէ՛ք նորա հոգւոյն վիճակն, հեռի իւր ընտանեկան յարկէն, յար ինչա մտածող. — նորա երջանկուն թիւնն, երբ հուսկ ուրեմն կը դառնայ յայն...:

Մի քանի բառերու մէջ, վերջացնելու համար, համաօտեցէ՛ք ընտանեկան յարկի սրբութիւնը, քաղցրութիւնը, բարձր նշանակութիւնը:

ԸՆԴԼԱՅՆՈՒՄՆ

Ընտանեկան յարկն օթեւման մ'է նուիրական որ իւր մէջ կ'ամբիօղի ինչ որ սիրելագոյն է մարդկային սրտին: Ի՞նչ բան աւելի սիրելի քան հայր, մայր, եղբայր, քոյր, ամուսին, զաւակ, աւելի հեշտալի քան ոոցա սիրոյն փոխադարձ վայելումն, և աւելի սրբազան քան այն յիշատակներ որք ի սոցանէ կուգան: Ընտանեկան յարկն կը բովանդակէ և կը բացատրէ այդ ամէն անոյշ բաներն: Բոյն մ'է այն սիրաջերմ մարդկային էակին համար իւր ամէն հասակներուն մէջ. ի նմա կը վայելէ խնամք անձնուէր զոր ոչ ոք դուրսը կարող է տալ նմա, սէր անսահման և ինքնուրաց որոյ հետ չէ կարող բաղդատուիլ այդ յարկին օտար էակի մը յաճախ կեղծուստաւոր բարեկամութիւնը: Բախտին հարուածոց և միջոցներուն դէմ ապաւին մ'է անքոյթ այդ յարկն. անդ կը հանգչի մարդ, անդ կ'օրհնի, անդ կը քաջալերուի. անչէլ սիրոյ հօւրն՝ որ ի նմա կը բորբոքի՝ կը տաքցնէ աշխարհի անսէր յարաբերութիւններէն ցրտասարսուռ հոգին. անձնուիրութեան անվհատ ոգին՝ որ կը բնակի ի նմա՝ յար պատրաստ է մեր սրտի վիրաց վերայ կաթեցնել սփոխածու բախտանն: Հաճոյքներն՝ զոր կը վայելէ մարդ նորա մէջ՝ անհամեմատ քաղցրութիւն մ'ունին, և անբիծ անարատ են, մինչ արտաքին զուարճութիւնք յաճախ պղտոր են և կը ձգեն իւրեանց ետեւ ախուր յիշատակներ:

Եւ մեր սիրտը, զգայուն այս քաղցրութեանց, յար կը խնդրէ ընտանեկան յարկն, և երբ զատուած է անտի՝ կը հառաչէ տըրտմազին նորա համար: Մանուկն, դպրոցին գրասեղանայ վերայ, կը մտածէ իւր տան

վերայ. օրն ո՞գիտէ քանիցս իւր մտաց առ-
ջն կը պատկերէ իւր մօր քաղցրիկ դէմքն,
գորովագին հայեցողածքն իւր հօր լուրջ՝
այլ սիրալիր կերպարանն, և քանիցս կ'ե-
րեւակայէ ինքզինք իւր եղբարց և քերց տ-
նոյ ընկերութեան մէջ: Երբ արձակուրդի
ժամն հնչէ, ի՞նչպէս խնդագին կը վազէ ի
տուն, կը համբուրէ ջերմագին իւր ծնողաց
ձեռներն. ո՛հ, ո՛րքան երջանիկ կ'զգայ իւր
անձն: Նուա՞գ խնդութեամբ կը դառնայ
հայրն երեկոյին՝ իւր ընտանի յարկին տակ
օրուան խոնջութիւններէն լահեցելու և
վայելելու իւր կնոջ և զաւակաց սէրը: Ո՛ր-
քան խեղճ հայրն արդեօք չարչարուած է
օրն ի բուն, աշխատելով, և յոգնելով, նե-
ղանալով, մերթ անիրաւութեանց դէմ դայ-
րանալով. բայց արդէն այն գաղափարն թէ
իրեններուն համար է որ կը տառապի՝ կը
խրախուսէր զինքն ու կը սրտապնդէր, և
հիմայ որ իւր գիմացն ունի իւր սիրելի ամու-
սինն և իւր շուրջը կը խաղան, կը խնդան, կը
ճուղողեն քաղցրերգակ սոխակաց նման իւր
որդիներն, կը մոռնայ բոլորովին ինչ որ կը-
րեց օրուան մէջ, իւր կնճռոտ տխուր ճա-
կաւոր կը սլարզի, և իւր աչերն՝ երախտա-
գիտութեան զգացմամբ լցուած՝ կը բարձ-
րանան յերկինս:

Ո՛հ, ո՛րքան դառն է ապա պանդուխտին
վիճակն. նա, իւր ետեւ թողած իւր ըն-
տանեկան յարկն, կը թափառի օտար աս-
տեղաց տակ. ամիսներն ու տարիներ կ'անց-
նին և ինքն հեռի է իրեններէն. ո՛ւր է իւր
մանկամարդ ամուսնոյն ժպիտը. ո՛ւր են
իւր զաւակաց վարդափայլ դէմքերն. ո՛ւր
է իւր ծերունի ալեւոր հայրն կամ մայրն
զոր թողուց տան անկեան մէջ և որոյ վեր-
ջին օրհնութենէն իսկ զրկուի գուցէ: Այս
հեռաւորութիւն, այս կարօտ ամէնէն դժըն-
դակն է այն չարեաց զոր անգութ բախտն
կը ծանրացնէ իւր վերայ: Յերեկներն իւր
միտք դրաւուած է իւր հայրենի տան պատ-
կերով, որ կը ճկէ իւր սիրտ. հազիւ դի-
չերներն հաճոյական երազներ՝ որք զինքն
կը փոխադրեն իրեններուն մէջ՝ դոյզն ինչ
կ'ամբքեն իւր վիշտ. բայց քանի՞ դառն է
զարթուիմ որ իւր աչաց առջեւ կը դնէ
յանկարծ ցաւալի իրականութիւնը: Դժուա-
րին է նկարագրել այն անպատու մ երջան-
կութիւնն որ կը ընու իւր սիրտ, երբ, վեր-
ջանալով իւր նժդեհութեան աւուրք, կը

դիմէ, կը թռչի իւր սիրելի ընտանեկան
յարկն, գորովագին կը համբուրէ իւր ծնո-
ղաց գողգողուն ձեռներն, կը սեղմէ իւր
հարսն իւր լանջաց վերայ և իւր գրկաց
մէջ կը վերցնէ իւր մատաղատի զաւակունքն:
Ի՞նչպէս անյագաբար իւր աչերն կը յածէ
իւր բոլորաիքն դիտելու տան մէն մի ա-
ռարկայներն որք կը թուին իրեն մէն մի
հինօրեայ բարեկամներ լինել:

Ընտանեկան յարկ. հո՛ն մանուկին օրօ-
րանք. հո՛ն ամուսնոց հարսնարանն. հո՛ն
ընտանեաց սեղանն. հո՛ն մօր ժպիտը. հո՛ն
հօր գիրկը. հո՛ն մանկանց դայլայլը. հո՛ն
պապուն օրհնութիւնը. հո՛ն ներկային սըր-
բազոյն ուրախութիւնք. հո՛ն անցելոյն սի-
րեւագոյն յիշատակք. հո՛ն ապագային
քաղցրագոյն ակնկալութիւնք:

Ո՛. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

Ը Ն Թ Ա Ց Գ

Վ Ե Ր Լ ՈՒ Ծ Ա Կ Ա Ն Ո Ճ Ո Յ

Դ Ա Ս Ա .

ՎԵՐԱՊԵՐ ԵՒ ԱՂՈՒՆՄԱՆԵՐԸ

Վիշապ մը գանձ մը կը պահէր խոր քա-
րայրի մը մէջ. դիչեր ցերեկ կը հսկէր զայն
պահպանելու համար: Երկու աղուէսներ,
խիստ նենգաւոր և ճարտար գող իրենց
արուեստովն, շողքորթութեամբ մեղմով
մուտ գտան անոր քով: Կարի հաճոյակա-
տար և փութկոտ մարդիկ չեն կարի վըտ-
տահելի: Անոր հետ կը վարուէին իբր ակա-
նաւոր մէկու մը հետ. կը զարմանային իւր
բոլոր քմածին հաճոյից վրայ, միշտ համա-
կարծիք էին անոր, և առանձինն իրարու
հետ անոր դիւրախաբութեանը վրայ կը
խնդային: Հուսկ ուրեմն վիշապը օր մը քը-
նացաւ անոնց մէջ. անոնք խեղդեցին զայն
և գանձին ամբողջին:

Հարկ եղաւ որ գանձը իրենց մէջ բաժ-
նեն, և այս շատ դժուար գործ մ'էր. քան-
զի երկու չարագործներ չարիք գործելու
համար միայն կը միաբանին: Անոնցմէ մին
սկսաւ բարոյախօսել. «Առ ի՞նչ օգուտ է
մեզ, կ'ըսէր, այս արծաթը. մետաղը չուտ-
ուիր, դահեկանները անմարսելի են»: Միւ-
սը այս խօսքերէն ինքզինքը համոզուած

ձեացուց, և վստահացուց թէ կուզէր փրկիսփայտաբար ապրիլ: Իւրաքանչիւրը գանձը թողուլ կեղծեց, բայց իրարու դէմ թակարդ լարելով զիրար պատառեցին:

ՖԵՆԵԼՈՆ

Համառօտ բովանդակութիւն: — Վիշապ մը քարայրի մը մէջ գանձ մը կը պահէ: Երկու աղուէսներ շողոքորթութեամբ զինքը կը խաբեն, կը խեղդեն և գանձը կը գրաւեն: Բայց չկրնալով իւրեանց մէջ միաբանիլ զայն բաժնելու համար զիրար կը պատառեն:

ԼՈՒԵՌՈՒՄՆ ԳՐԱԳԻՏԱԿԱՆ

1. ԱՆՃԱԼԵՐ, ժամանակ եւ տեղ

Ո՞րք են խօսողը և գործողը այս առակին մէջ: — Վիշապ մը և երկու աղուէսներ:

Ո՞ր տեղի կուենանայ եղելութիւնը: — Խոր քարայրի մը մէջ:

2. Խօսք եւ գործք

1. Ի՞նչ կ'ընէր վիշապը իւր քարայրին մէջ: — Գիշեր ցերեկ կը հսկէր պահպանելու համար գանձ մը:

2. Ի՞նչ ըրին երկու աղուէսները: — Շողոքորթութեամբ մեղմով անոր քով մուտ գտան:

3. Երկու աղուէսները ի՞նչպէս կը վարուէին վիշապին հետ: — Անոր հետ կը վարուէին իբր ահանաւոր մէկու մը հետ. միշտ համակարծիք էին անոր, յետոյ առանձինն անոր վրայ կը խնդային:

4. Ի՞նչ պատահեցաւ օր մը երբ վիշապը քնացաւ երկու աղուէսներուն մէջտեղ: — Անոնք խեղդեցին զայն և գանձին տիրեցին:

5. Ի՞նչ տեղի ունեցաւ երկու աղուէսներուն մէջտեղ, երբ գանձին տէր եղան: — Չկրցան միաբանիլ զայն բաժնելու համար:

6. Անոնցմէ մին ի՞նչ կ'ըսէր: — Կ'ըսէր թէ արծաթը իրենց օգուտ մը չունի, քանզի չուտուիր:

7. Միւս ընկերը ի՞նչպէս վարուեցաւ: — Այս խօսքերէն համոզեալ ձեացուց և վստահացուց որ կ'ուզէր փրկիսփայտաբար ապրիլ:

3. Արդիւնք կամ եզրակացութիւն

Այս խորամանկութեան և նենգութեան կռիւը ի՞նչպէս կը վերջանայ: — Մինչդեռ երկու աղուէսներէն իւրաքանչիւրը կը կեղծէր գանձը թողուլ, իրարու թակարդ լարելով զիրար պատառեցին:

Բարոյական

Ի՞նչ կը սովորեցնէ մեզ այս առակը: —

1. Թէ պէտք է զգուշանալ շողոքորթներէն: — 2. Թէ չարութեամբ ստացեալ ինչքը բնաւ օգուտ մը չունի

ԽՕՍԱԳՅՈՒԹԻԿ

1. Ի՞նչ տեսակ կենդանի է վիշապը: — Առատկեալ կենդանի մ'է զոր կը ներկայացնեն մագլաւոր, թեւաւոր և օձի տանով:

2. Խոր ածականը շատ կարեւոր է քայքայ բառին քով: — Ոչ. որովհետեւ արդէն երկրի մէջ գտնուած խոր ու ծակ տեղերուն քարայր կ'ըսուի:

3. Ուրեմն ի՞նչ բանի կը ծառայէ հոս այս ածականը: — Խօսքին աւելի վայելչութիւն տալու:

4. Այս տեսակ ածական մը ի՞նչ կը կոչուի: — Վերադիր:

5. Գիշեր ցերեկ կը հսկէր զայն պահպանելու համար. Այս նախադասութիւնը մեզ ի՞նչ կ'իմացնէ: — Մեզ կ'իմացնէ վիշապին ազահութիւնը, և պահած գանձին վրայ ունեցած սէրը:

6. Իրենց արուեստովն ըսելով, ի՞նչ ըսել կ'ուզուի: — Ըսել կ'ուզուի որ երկու աղուէսները սովոր էին գողնալու և խաբելու:

7. Ի՞նչ է շողոքորթութիւնը: — Սուտ կամ չափազանցեալ գովեստ:

8. Որո՞ւ կ'ըսուի հաճոյակատար: — Հաճոյակատար կ'ըսուի անոր որ իւր անձը կը պատշաճեցնէ ուրիշի մը բնաւորութեան, անոր հաճելի ըլլալու համար:

9. Փութկոտ մարդիկ ըսելով ի՞նչ կը հասկընաք: — Փութկոտ կ'ըսուին այն մարդիկ որք ամէն բան ընելու պատրաստ կ'երևան:

10. Ի՞նչ ըսել կ'ուզէ սա խօսքը. Կարի հանոյակասար եւ փութկոտ մարդիկ կարի վրսահելի չեն: — Այս խօսքը ըսել կ'ուզէ թէ, ամենէն աւելի վստահելի չեն այն մարդիկ որոնք ամենէն աւելի պատրաստ կ'երևան մեր հաճոյքն ու փափաքը կատարելու համար:

11. Կարի հանոյակասար եւ փութկոտ մարդիկ կարի վստահելի չեն խօսքը բուն իրողութեան մասը կը կազմէ: — Ո՛չ, հրահանգիչ խորհրդածութիւն մ'է, վճիռ մը զոր հեղինակը կ'աւելցնէ պատրաստելու համար ընթերցողին միտքը այնմ որ յետոյ պիտի կատարուի:

12. Անոր հետ կը վարուէին էն մինչև համակարծիք էին անոր. Ի՞նչ բանի վրայ կը խօսի հեղինակը: — Այն շողոքորթութեանց

վրայ զոր աղուէսները ի գործ կը դնէին խաբելու համար վիշապը:

13. Առանձինն իրարու հետ անոր դիւրախաբութեանը վրայ կը խնդային խօսքը ի՞նչ կ'իմացնէ մեզ:— Աղուէսներուն կեղծաւորութիւնը:

14. Ինչո՞ւ երկու աղուէսները այսպէս կեղծաւորութեամբ կը շողոքորթէին վիշապը:— Շահելու համար անոր վստահութիւնը և գրաւելու համար գանձը:

15. Ինչո՞ւ աղուէսները վիշապին քունէն օգուտ քաղեցին զայն սպաննելու համար:— Որովհետեւ վիշապը շատ ահարկու կենդանի մ'էր և երկու աղուէսները չէին համարձակեր անոր վրայ յարձակիլ մինչ արթուն էր նա:

16. Ի՞նչ ըսել է փիլիսոփայաբար ապրիլ:— Ապրիլ իմաստունն մարդու մը պէս որ քիչով կը բաւականանայ:

17. Ինչո՞ւ իւրաքանչիւրը գանձը թողուլ կեղծեց:— Հաւատացնելու համար ընկերին թէ կը հրաժարէր զայն առնելէ:

18. Թախարհին 4 հոմանիշ գտէք:— Որսգայթ, կափուլ, ծուղակ, հաղբ:

19. Շուրջոքեկին 4 հոմանիշ գտէք:— Փաղաքէլ, չնթել, մարդելուղել, չողմեկ:

20. Այս առակին առաջին մասին մէջ ի՞նչ պատմուած է:— Ինչ որ ըրին երկու աղուէսներն վիշապին գանձը գրաւելու համար:

21. Այս առակին երկրորդ մասին մէջ ի՞նչ պատմուած է:— Ինչ որ ըրին երկու աղուէսները զիրար խաբելու համար, և իրենց նենգութեամբը կրած պատիժին:

ՎԱՐԺՔ

Ա.

Գտնել պատճառը և ապա գլխաւոր միջոցը:

1. Հաւատացեալները յեկեղեցի կը կոչէ (ո՞վ) ժամակոյժը (ի՞նչ բանով). զանգակով:

2. Երկիրը կը հերկէ. — երկրագործ. — աւոր. բան. բրիչ:

3. Կ'ուսանի. — աւակետ, ուսանող. — գիրք, ուսուցիչ:

4. Զուկ կ'որոսայ. — ձկնորս. — ուռկան. կարք:

5. Հրդեհը կը մարէ. — ջրհանակիր. — ջրհան:

6. Կ'սպաննէ. — ոնրագործ. դահին. — սուր, դաւոյն. ասրհանակ:

7. Կը գրէ. — գրագիր. մատենագիր. — գրիչ:

8. Կը քանդակէ. — քանդակագործ. — գրոց:

9. Կը նկարէ. — նկարիչ. — վրձին, ներկ:

10. Կօշիկ կը շինէ. — կօշկակար. — հերիւն:

11. Կը տպագրէ. — տպագրիչ. — մամուլ:

12. Ժամը կը ցուցնէ. — ժամացոյց. — սլաք:

13. Օգին մէջ կը բարձրանայ. — օդանւորդ. — օդապարիկ:

Բ.

Ի՞նչ կը կոչուի.

1. Այծի ճագը. — ուլ, ամիկ

2. Արջու » — բոժիւն

3. Գայլի » — գայլակորիւն

4. Եղնիկի » — եղնորք

5. Ուղտու » — կոզուն

6. Կովու » — որք

7. Իշու » — յաւանակ

8. Զիւ » — մսուկ, բուռակ

9. Խոզի » — խոնկոր. խոջորակ

10. Հաւու » — վառեակ

11. Բազէի » — գաւազ

12. Ոչխարի » — գառն, որոջ, բուծ:

Գ.

Ընդլայնել՝ ըսելով իրողութեան հետեւանքը:

1. Կայծ մը ինկաւ տանը յարդանոցին մէջ, խկոյն... —

Իսկոյն յարդը կը բռնկի, հուրը կը ճարակի, ընդհուպ տախտակամածները կ'սկսին այրիլ: Աղաղակներ կը բարձրանան, մարդիկ խռովեալ կը վազեն, բայց հրդեհը կը սաստկանայ և բովանդակ տունը հրոյ ճարակ կ'ըլլայ:

2. Քառասուն և վեց ժամ անընդհատ անձրեւ տեղաց.

— Աստի յառաջ եկաւ ջրոց անհնարին առաւելութիւն մը. առունները հեղեղ եղան և վտակները գետ. ջուրք կը բարձրանային արագ արագ. յուսահատութեան ձայներ կը լսուէին. մարդիկ կը փախչէին և սլաքուհասը գամ քան զգամ կ'առաւելոյր:

3. Այս աշակերտը գասի ժամանակ կը զբօսնու, ուստի բան մը չսկսի ուսանի...

— Քննութեանց ժամանակ ամօթահար սիրտի մնայ, իւր ուսուցիչները ու ընկերները գինքը չսիրտի սիրեն, տգէտ եկած ըլ-

լալով դարձեալ տգէտ պիտի մեկնի որ մը վարժարանէն, ծնողքը պիտի ցաւին իւր վրայ, և անտարակոյս չպիտի կրնայ կասարել այն գործը զոր նախախնամութիւնը որոշած էր նմա մարդկային ընկերութեան մէջ:

ՄԻՋՐԱՆ ԱՍՔԱՆԱՁ

ԳԱՂԻԵՐԷՆ ԼԵՂՈՒ

Գաղիերէն ընթերցուածք հանդերձ
բացատրութեամբ

1- LE LABOUREUR ET SES ENFANTS

Travaillez, prenez de la peine¹; c'est le travail qui donne le revenu le plus assuré.

Un riche laboureur², étant sur le point de mourir³, fit venir⁴ ses enfants auprès de son lit, et, lorsqu'il fut seul avec eux, il leur dit: « Quand je serai mort⁵, gardez-vous de vendre⁶ le champ que nous ont laissé nos pères; un trésor y⁷ est caché; je ne connais⁸ point l'endroit; mais avec un peu de courage⁹ vous finirez par le trouver¹⁰. Remuez le champ dès que vous aurez fait la moisson¹¹; bêchez, creusez, fouillez; ne laissez aucun endroit où la main ne passe et repasse¹². » Après la mort du père¹³, les enfants prirent des bèches et des hoyaux¹⁴, et se mirent à retourner le champ de tous côtés¹⁵. A la vérité¹⁶, ils ne trouvèrent point de trésor¹⁷; mais la terre qui avait été si bien remuée, produisit du blé en abondance¹⁸. Alors les enfants comprirent²⁰ que le travail était le trésor dont²¹ leur père avait voulu parler.

P. LAROUSSE

2. ԲԱՅԱՏՐՈՒԹԻՒՆՔ

1. Prenez de la peine, բառ առ բառ՝ նեղութիւն (յանձն) առեմ, աշխատեցեմ, յոգնեցեմ. Prenez, հր. եղ. յգ. բ. դէմքը prendre (առնուլ) անկ. բային նախնական ժամանակը. Prendre, prenant, pris, je prends, je pris. անկ. ած. ժամ. (սհմ. ներկ) ils prennent. (ստ. ներք.) que je prenne, que tu prennes, qu'il prenne, qu'ils prennent.— De la peine, նեղութիւն, մասնական մտքով առնուած:

2. Laboureur, հողագործ, մշակ, eur յետադաս մասնկումը (suffixe) անանցեալ labourer (հերկել) աներևոյթէն: Բայից Աներևոյթին վերջաւորութիւնն յապաւելով և eur մասնիկն յաւելցնելով կը կազմուին անձ ցուցնող գոյականներ որք բային նշանակած գործողութիւնը կատարող կը նշանակեն. օր. voyageur

(ճամբորդ), voleur (գող), relieur (կազմարար), vengeur (վրէժխնդիր), receveur (ընդունող), vendeur (ծախող), vainqueur (յաղթող) ևն. որք կ'անցնին voyager (ճամբորդել) voler (գողալ) reliev (կազմել), venger (վրէժ խնդրել), recevoir (ընդունել), vaincre (յաղթել) և vendre (ծախել) բայերէն: Երկրորդ լծորդութեան կանոնաւոր բայից արմատին և eur մասնական մէջտեղ կ'աւելնայ iss վանկը. ուստի bâtir (շինել), polir (յղկել), fournir (հայթայթել) բայերէն կ'անցնին bâtisseur (շինող), polisseur (յղկիչ), fournisseur (հայթայթիչ) գոյականներն:

3. Etant sur le point de mourir, բառ առ բառ՝ մեռնելու կէտին վրայ ըլլալով, այսինքն մահամերձ, մահուան դուռն հասած լինելով. Etre sur le point de (աներեւոյթ) բառ մ'ըլլալու կամ ընելու մօտ ըլլալ:

4. Fit venir, բառ առ բառ՝ զալ տուաւ (բրու), այն է՝ բերել տուաւ, կոչեց. — Fit, անց. որոշ. եղ. գ. դէմքը faire (ընել) անկ. բային: Նախն. ժմեկք. Faire, faisant, fait, je fais, je fis. Անկ. ածնց. ժմեկք. (Սհմ. ներկ.) vous faites, ils font. (ապառնի) je ferai ևն. (թէակ.) je ferais ևն. (հր.) faites. (ստ. ներկ.) que je fasse ևն:

5. Quand je serai mort, երբ մեռած պիտի լինիմ, մեռնելու լինոյ. — Mort (մեռած) անց. ընդ. mourir (մեռնել) անկ. բային: Նախն. ժմեկք. Mourir, mourant, mort, je meurs, je mourus. Անկ. ած. ժմեկք. (Սհմ. ներկ.) ils meurent. (Ապառնի) je mourrai ևն. (թէակ.) je mourrais ևն. (Աս. ներկ.) que je meure, que tu meures, qu'il meure, qu'ils meurent.

6. Gardez-vous de vendre, զգուշացի ծախել, չըլլայ որ ծախեմ. Se garder de . . . , զգուշ կալ:

7. y, անդ, ի մեմ: y թէ մակբայ է և թէ երրորդ դէմքի էական դերանուն. երբ մակբայ է՝ կը նշանակէ հոգն, հոս. երբ դերանուն՝ արական հոլով է եղաւ և յոգնակի, արական և իգական ու կը նշանակէ անոր, անոց, ի մեմ, ի հոսս:

8. Je ne connais point, չեմ հասկեր, չեմ գիտեր բնաւ: Je connais, սհմ. ներկ. եղ. ա. դէմքը connaître անկ. բային: Նախն. ժմեկք. Connaître, connaissant, connu, je connais, je connus.

9. Avec un peu de courage, քիչ մ'արիութիւն. Փառակական մակբայք, որպէս peu (քիչ), beaucoup (շատ), trop (չափազանց), assez (բաւական), plus (աւելի), moins (նուազ), autant, tant (այնչափ) իրենց գոյական խնդիրը de նախադրութեամբ և անյօդ կ'առնուն. ինչպէս peu de courage (քիչ մ'արիութիւն), beaucoup de patience (շատ համբերութիւն), trop de zèle (չափազանց եռանդ) ևն., ի բոց առեալ bien (շատ) և la plupart (մեծ մասն), որք յօդով և de ով միանգամայն կ'առնուն իրենց գոյական խնդիրը. ինչպէս bien de la peine (շատ նեղութիւն), la plupart des hommes (մարդոց մեծ մասը):

10. Vous finirez par le trouver, բառ առ բառ՝ զայն զսնելով պիտի վերջացնեմ, այսինքն՝ վերջապէս պիտի զսնեմ զայն: Այսպէս Il a fini par succomber խօսքը կը թարգմանուի վերջապէս (ուր ուրեմն) ընկնեցաւ:

11. Dès que vous aurez fait la moisson, ան-
միջապես որ հունձիր քաժ պիտի լինի, այսինքն
հունձման րնելէ կամ քաղելէ անմիջապես յետոյ :

12. Repasse վերսին անցնի . Re նախադաս մաս-
նիկն սովորաբար կրկնութեամբ գաղափար մը կը յա-
ւելու . dire բտել, redire կրկին բտել . paraître ե-
րեւել, reparaître վերստին երեւիլ, և ըն .

13. Après la mort, յետ մահուան : Գաղիներէն
մէջ նախադրութեան ինդիքն սովորաբար հայցական
հոլով կը գրուի երբ նախադրութիւնն պարզ է, իսկ
երբ բաղադրեալ, այն է՝ երբ և կամ en նախադրու-
թեամբ և ուրիշ բառով մը կազմուած է, իրմէ ետեւ
de կուգէ . ուստի կը յուսի dans le jardin (պարտիզին
մէջ), pour l'amour de Dieu (Աստուծոյ սիրոյն հա-
մար), avec son ami (իւր բարեկամին հետ), և au-
près de sa mère (իւր մօր քով), en face de l'é-
glise (եկեղեցւոյ դիմացը), à côté de lui (անոր քովը)
և ըն . սակայն կ'ըսուի près de la maison (տանը մօտ)
loin de sa patrie (իւր հայրենիքէն հեռու) de նախ-
դրիւ, և à travers la prairie (մարգագետնին մէջէն)
առանց նախդրի :

14. Des hoyaux, հոպաքեր, մասնական մտքով
առնուած յոգնակի :

15. Se mirent à retourner le champ de tous
côtés, սկսան արտ խրապէս բռնել ամէն կողմանէ .
Se mettre à (աներեւոյթով), սկսիլ . Mirent, անց . որչ .
յգ . գ . դէմք . Նիւնկն . ժմեկք . Mettre, mettant,
mis, je mets, je mis .

16. A la vérité, արդարեւ (մկբ) :

17. Ils ne trouvèrent point de trésor, գտնա չը
գտան բնաւ . Երբ մասնական մտքով առնուած բառն
բացասական բայի սեռի ինդիք է՝ առանց յօդի, միայն
de նախադրութեամբ, կը գործածուի . այսպէս՝ կ'ըս-
ուի j'ai de l'argent (ստակ չունիմ), je n'ai pas d'ar-
gent (ստակ չունիմ) . j'ai des amis (բարեկամներ
ունիմ), je n'ai pas d'amis (բարեկամներ չունիմ) :

18. Qui avait été si bien remuée, որ այնքան
լաւ խախտուած, բռնած էր . Avait été remuée,
գերակատար եզ . գ . դէմք remuer բային կրաւորա-
կանին : Գաղիներէն մէջ կրաւորական բայի ամէն ժա-
մանակներն ալ բաղադրեալ են . ներգործական բայի
մը կրաւորականը կը շինուի être բային բոլոր եղանա-
կաց ու ժամանակաց քով գնելով ներգործականին անց-
եալ ընդունելութիւնը : Այսպէս՝ être aimé (սիրուիլ),
je suis aimé (կը սիրուիմ), j'étais aimé (կը սիր-
ուէի), je fus aimé (սիրուեցայ), j'ai été aimé (սիր-
ուած եղայ) և ըն .

19. Produisit du blé en abondance, առատօրէն
գտնեմ արտաբերեց : Produisit, անց . որչ . ևզ . գ . դէմք
Produire անկ . բային . Նիւնկն . ժմեկք . Produire, pro-
duisant, produit, je produis, je produisis : Ասոր
նման կը խոնարհուին uire վերջացեալ բայերը . tra-
duire (թարգմանել), conduire (առաջնորդել), con-
struire (շինել) և ըն . միայն nuire (ֆախսել) և lui-
re (ծագել, փայլիլ) բայից ընդ . անցեալներն կը լինին
nui, lui, առանց ի :

20. Comprirent, հասկցան . անկ . բայ . կը խոնարհի
բոտ prendre ի :

21. Dont, զորմէ, որոյ վրայ : Dont յար . դերանուն
է սեռական և բացասական հոլով, արական և ի-

գական . կը նշանակէ որոյ, որոյ, յորմէ, յորոյ, զոր-
մէ, զորոյ :

22. Avait voulu, ուզած էր . voulu, անց . ընդ .
vouloir անկ . բային . Նիւնկն . ժմեկք . vouloir, vou-
lant, voulu, je veux, je voulus . Անկ . ածնց . ժմեկք
(սհմ : ներկ .) ils veulent . (Ապ .) je voudrai և ըն .
(թէակ . ներկ .) je voudrais և ըն . (հրմ :) veuille (veux),
veuillons (voulons), veuillez (voulez) . (Ստոր . ներկ .)
que je veuille, que tu veuilles, qu'il veuille, qu'ils
veuillent .

3. ՀԱՅՆԵՐԷՆ ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆ

ՀՈՂԱԳՈՐԾՆ ԵՒ ԻՒՐ ՈՐԴԻԳ

Աշխատեցէ՛ք , յոգնեցէ՛ք . աշխատու-
թիւնն է որ կուտայ ապահովագոյն եկա-
մուտը :

Հարուստ հողագործ մը , մահուան դու-
ռնն հասած , բերել տուաւ իւր զաւակնե-
րն իւր անկողնոյն քով , և , երբ առանձին
մնաց նոցա հետ , ըսաւ նոցա . « Մեռնելէս
յետոյ չըլլա՛յ որ ծախէք այն արտ զոր
մեզ թողին մեր հարք . գանձ մը կայ ծած-
կեալ անդ . տեղը չեմ գիտեր , բայց քիչ
մ'արիւծութիւն որ ունենաք , պիտի գտնէք
զայն վերջապէս : Հունձքն ընելէ՛ անմիջա-
պէս յետոյ , արտը խարխարեցէք . բահե-
ցէ՛ք , փորեցէ՛ք , պեղեցէ՛ք . մի՛ թողուք
ընաւ տեղ մ'ուր ձեռքն չ'անցնի կրկին և
կրկին : » Հօր մահուանէն յետոյ , որդիք
առին բահեր և երկփանի բրիչներ , և սկսան
արտն ի խոր , բրել ամենուստ : Յիրաւի
գանձ չգտան բնաւ . բայց հողն , որ ա՛յնպէս
լաւ քրքրուեր էր , բերաւ ցորեան առատո-
րէն : Այն ատեն որդիք ի միտ առին թէ
աշխատութիւնն էր այն գանձ զորմէ իւր-
եանց հայր ուղած էր խօսիլ :

Ռ . Յ . ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԲԱՐՁՐԱԳՈՅՆ ԸՆԹԱՑՔ

ՊԱՏՄՈՒԹԻՒՆ , ՀԱՅ ԴՊՐՈՒԹԵԱՆ

ԼԵԶՈՒ , ԱՌԱՆՁԻՆՆ՝ ՀԱՅՆԵՐԷՆ

Լեզուք կարեն նկատուիլ , մի՛ լեզուաբա-
նական տեսութեամբ իբրեւ լեզուաց այս ինչ
կամ այն ինչ ցեղին թուէն , երկրորդ՝ ըստ
ժամանակին , իբրեւ հին կամ նոր , երրորդ՝

գրագիտական տեսութեամբ իրրեւ զուսկամ հարազատ և աղաւաղեալ:

Լեզուաբանութիւն կը կոչուի այն ուսումը որ այլ և այլ լեզուաց համեմատութեան կը ցուցնէ աւելի կամ նուազ ստուգութեամբ նոյա ծագումը կամ ազգակոնութիւնը:

Լեզուներն իւրեանց ծագման կամ ազգականութեան կողմանէ կրնան բաժնուիլ այլ և այլ խումբեր, որոց գլխաւորներն և ծանօթներն են Հնտերոպական, Սեմական և Դուրանական:

1. Հնտերոպական կամ հնդկ-եւրոպական կը կոչուին լեզուք այն ազգաց որ ըսկըսելով Հնդկաստանէ, ընդ մէջ Կովկասու և Կորդուաց, արեւմտեան ուղղութեամբ կը տարածուէին ի հիւսիսոյ Փոքուն Ասիոյ մինչև Եւրոպայի ծայրը:

Ծանօթ լեզուք որ յայտնապէս այս խմբէն են՝ են, 1. Հնդկաց հին լեզուն որ կը կոչուի սանսքրիտ, և որով գրուած են Հնդկաց կրօնական գրեանն որ կը կոչուին Վեդա. 2. Զնտն կամ Զանդի լեզուն, այսինքն այն լեզուն զոր կը խօսէին հին Մարք և Պարսք և ուրիշ արիական ազգեր, և որով գրուած են զրադաշտական կրօնից մատեանք որ կը կոչուին Զենդ-աւեստա, այսինքն՝ կենդանի բան: Զնտի բարբառներէն մին էր Պահլաւերէն, նոյնպէս նըուիրական լեզու Պարսից զկնի Զնտին. 3. Հելլենարէն կամ Յունարէն և Լատին լեզուն: Գերմանական և Սլաւական լեզուք ևս որ շատ ճիւղեր ունին՝ կը համարուին ի բնէ Հնդկ-Եւրոպական:

Հնտերոպական լեզուաց կը տրուի նաև արիական անունն, յանուննէ Արեաց որ էր ազգային անուն Զանդիի ցեղերուն, գլխաւորապէս Մարաց և Պարսից որ այս լեզուն ունէին: Բայց արիական կամ իւանական անունը կը պատշաճի մանաւանդ զանդիի ճիւղին:

2. Սեմական կը կոչուին լեզուք այն ազգաց որ կը տարածուէին Տիգրիսէ մինչև Միջերկրականն, հանդերձ Արաբիա:

Ծանօթ լեզուներ որ կը վերաբերին այս խմբին են, 1. Եբրայեցերէն, այն է՝ Հին Կտակարանի լեզուն որ կը համարի նոյն ընդ լեզուին Փիւնիկեցոց. 2. Հին Քաղդէարէն և հին Ասորերէն կամ Արամերէն լեզուն, 3. Մեզ ծանօթ Արաբերէն:

Հին Քաղդէարէն և Հին Ասորերէն մընացորդ չունինք. հին Արամերէն չինուած նորագոյն լեզու է Սիրիայ կոչուած տարբերէնն յոր թարգմանուած են Հին և Նոր Կրտակարանք իրր երեք դար յառաջ քան ըզՀայերէն թարգմանութիւնն: Սիրիաք լեզուն կ'ուսանէին մեր նախնիք ժամանակաւ, իրր և եկեղեցական լեզու յառաջ քան զգիւտ Մեսրոպեան նշանագրաց, երբ Սասանեանք արգիլեցին յունարէնի ուսումն քաղաքական պատճառաւ իրենց բաժնին մէջ:

Արգի գիտունք տուած են լեզուաց այս խմբին սեմական անուն, վասն զի ըստ ազգաբանութեան Մովսիսական գրոց, այս լեզուները խօսող ազգեր, բաց ի Քանանացիներէն, կը համարուին սերեալ Նոյի յերկրորդ որդւոյն ի Սեմայ:

3. Գալով Դուրանեան խմբին, Դուրան անունն, ըստ հայ մատենագրաց՝ Տաներան, ուրիշ բառով՝ Անարի, կը տրուէր ի Պարսից այն ազգերուն որ չէին արիական ցեղէն:

Այսպէս կը կարգանք առ Եղիշէի, «Միհրներսէհ վզրուկ հրամանատար Երան և Տաներան». այլուր աւի. «Միհրներսէհի մեծի հազարապետի Արեաց և Անարեաց»: Այսպէս Յոյնք սովոր էին բարբառս կոչել այն ազգերն որ չէին սերնդեամբ Հելլէն, ուստի կ'ըսուէր, «Յունաց և բարբարոսաց»:

Բարբարոս, Βάρβαρος, կը նշանակէ բուն այլալեզու կամ որոյ լեզուն օտար էր Յունաց, և ոչ արգի մտօք՝ խռժաղուժ, վայրենի. այսպէս էր հաւանականապէս Դուրան կամ Տաներան (Անարի) բառին նշանակութիւնն, այսինքն՝ ոչ-արիական: Բարբարոս անունէն կը թուի հայերէն բարբառ, բարբառել:

Դուրանեան ազգերուն բնակութիւնն էր գլխաւորապէս ի հիւսիսոյ Կովկասու դէպ յարևելս մինչև Թուրքաստանի և Սիպերիոյ անապատներն, նաև ի հիւսիսոյ Հայոց առ Կուր գետով յայսիոյ Կովկասու:

Դուրանեան էին, այսինքն ունէին Հնդկ-Եւրոպական, ևս և սեմական լեզուներէն տարբեր ցեղ լեզու, Գուգարք կամ Վիրք, և Գարգարացիք, այսինքն Աղուանք առ Կուր գետով որ առ Արշակունեօք սահման ի մէջ Հայոց և նոյա (Բուզ. Ե. ԺԳ. ԺԵ.): Դուրանեան էին հաւանականապէս նաև Մազքութք և Հոնք կամ Քուշանք որ և Հեփթաղ կը կոչուին մեր պատմութեան

մէջ, և որոց դէմ ստէպ պատերազմներ ունեցան Սատանեանք (Բուզ. Ե. Է. Լէ. Եղիշէ Էջ 21. 149. 151. Փարպ. 471, 473): Բուզանդ Մագիթքաց Թագաւորին զօրաց մէջ կը յիշէ Ալանաց, Հոնաց, Փոխաց, Թաւասպարաց, Հեճմատականաց, Իժմախաց, Գաթաց, Գղուարաց, Շչբաց, Ճղրաց, Բաղասճագ, Եգերսուանաց և այլ «խառնազանճ» ցեղերու գունդեր (Բուզ. Գ. Է.): Եղիշէ, Ճղրաց, Գղուարաց, Հեճմատականաց, Փոխաց, Թաւասպարաց հետ կը յիշէ նաեւ ուրիշ հիւսիսային ցեղեր, ինչպէս Լփնիս, Խայլանդուրս, և լն. (Եղիշ. 21. 250): Ըզ-Լփնիս կը յիշէ նաեւ Խորենացին: Դուրանեան խմբէն մեզ ծանօթ լեզու է Թուրքերէն, որ բաւական նպաստ կը մատուցանէ հայերէնի լեզուաբանական քննութեան, ինչպէս մատուցանէ նաեւ վրացերէնի գիտութիւնը:

[Շարունակելի]

Ա. Մ. ԴԱՐԱՅԱՆԵԱՆ

Փ Ի Լ Ի Ս Ո Փ Ա Յ Ո Ւ Թ Ի Ի Ն

ՀՈԳԵՐԱՆՈՒԹԻՒՆ

(Պէրպլեբեան վարժարանի մէջ աւանդեալ դասուց ամփոփում):

ԴԱՍ Ա.

ՀՈԳԵՐԱՆԱԿԱՆ ԵՐԵՒՅԹՔ. — ՀՈԳԵՐԱՆՈՒԹԻՒՆ ՄԵԹՈՏԸ. —

ՀՈԳԻՈՑ ԿԱՐՈՂՈՒԹԻՒՆՔ.

1. Հոգեբանութեան առարկայն: — Մարդկային էակին մէջ կը կատարուին իրողութիւններ որք կը կոչուին գիտակցական կամ հոգեբանական երեւոյթ (phénomènes de conscience ou psychologiques). զորօրինակ, բան մ'ըմբռնել, յիշել, երեւակայել, դատել, հաճոյք կամ ցաւ, ուրախութիւն կամ տրտմութիւն զգալ, յուսալ, երկնջիլ, սիրել, ատել, որոշողութիւններ ընել, ևն: Այս երեւոյթք հոգեբանական կը կոչուին հակադրութեամբ բնախօսական երեւութից որք նոյնպէս տեղի ունին ի մարդն. ինչպէս շնչառութիւն, մարտողութիւն, շրջագայութիւն արեան, շարժումն, և ուրիշներ: Այս կրկին տեսակ երեւոյթք չեն կրնար միմեանց հետ չլիթիլ. վասն զի մինչդեռ բնախօսականք կը կատարուին միջոցին

մէջ, ձեւ մ'ունին, զգայարանօք ըմբռնելի են, հոգեբանականք միայն տեսողութեան մէջ կը կատարուին, ձեւ չունին, ու միմիայն գիտակցութեամբ ըմբռնելի են, այսինքն այն կարողութեամբ զոր ունինք ըմբռնելու մեր ներքին կեանքը, մեր հոգւոյն վիճակները կամ գործունէութիւնը. բաց աստի՝ մինչդեռ առաջնոց վախճանն է մարմինը պահպանել, զարգացնել կամ վերականգնել, վերջինք նպատակ ունին մանաւանդ հոգին, բարոյական էութիւնը պահպանել և զարգացնել: Այս վերջին կարգի երեւոյթներն ուսումնասիրել, զանոնք վերլուծել, դասակարգել, և անոնց օրէնքները խաղարկել աւարկայ է հոգեբանական գիտութեան: Մարդոյն գիտութեան կարեւորագոյն մասն է, զի մարդն իւր մտաւոր և բարոյական կենսոքն ու հանգամանօք մանաւանդ կը գրաւէ արարածոց մէջ առաջին տեղն, և մարդոյն կատարեալ ծանօթութեանն համար անհրաժեշտ է գիտնալ նորա բարոյական ընութիւնն:

2. Հոգեբանութեան մեթոտ: — Բնախօսութիւն և հոգեբանութիւն երկուքին եւս փորձառական գիտութիւններ են և հետեւապէս զննական է իրենց մեթոտն: Բայց մինչդեռ զգայարանօք և գործինքնով կը զննէ բնախօսն ֆիզիքական կեանքի իրողութիւններն, և այն առաւել այլոց վրայ, հոգեբանին առաջին ու անհրաժեշտ գործին գիտակցութիւնն է: Հոգեկան երեւութից ծանօթանալու համար առաջին պայմանն է ուշադիր զննութիւնն իւր անձին, իւր ներքին կենաց: Ոչ ինչ կարէ այս անձնական գիտողութեան տեղը ընել՝ այնպիսի ծանօթութեանց ստացման համար զորս չէ հնար որ և է պատկերով զգալի ընել: Բայց գիտակցական երեւոյթներն իր վրայ քննելէ յետոյ, հոգեբանը նոցա արտայայտութիւնը կ'ուսումնասիրէ այլոց վրայ, իւր ծանօթութիւնքը կը բազմապատէ ու կը կցէ այլոց ծանօթութեանց հետ, գրականութեան ու պատմութեան մէջ կը քննէ մարդկային հոգւոյն բացատրութիւնքն, և բազմապատիկ մասնաւոր իրողութիւններէ կը հետեւցնէ ինչ որ կայ բնագիտութեան նոցա մէջ, այն է նոցա օրէնքները, զի օրէնքն է երեւութից մէջ գտնուած հաստատուն առընչութիւնն: Հոգեբանութիւնն նաեւ ի գործ կը դնէ բազմապատկան եղանակն, վայրենի

մարդոյն և քաղաքակիրթ մարդոյն, տղուն ու չափահասին, յիմարին ու առողջին հոգեկան կացութիւնքն և նոյն իսկ կենդանւոյն ու մարդոյն իմացականութիւնքն միմեանց հետ համեմատելով, և այսպէս լաւագոյնս ճանաչել նկրտելով մարդկային հոգին իւր այլ և այլ յատկութեանց ու երեւութից ու վիճակաց մէջ:

3. Հոգեբանական երեւոյթ երեք խումրի կը վերածին: — Հոգեբանութիւնն է ուրեմն ուսումն մարդկային հոգւոյն. բայց այս հոգին մի աշխարհ է. ի՞նչ ովկիանոս գաղափարաց, յիշատակաց, զգացմանց, յուզից, կրից, բնազդմանց, ունակութեանց, որոշողութեանց, կիսականութեանց, բաղձանաց: Սակայն ի՞նչ որ ալ լինին թիւն ու զանազանութիւնն մարդոյն իմացական գործունէութեան եղանակաց, երեք խումբ երեւոյթներ որոշապէս կը տեսնուին ի նմա: Ո՛ր և է հոգեբանական երեւոյթ մի ձեւն է մտածութեան կամ զգայնութեան կամ գործունէութեան. ուստի և երեք կարողութիւնք հոգւոյ (facultés de l'âme), որք կը համապատասխանեն այդ երեք կարգ իրողութեանց: Սոյն երեք կարողութիւնք են Իմացականութիւն (intelligence), Զգայնութիւն (sensibilité), և Գործունէութիւն կամ Կաւֆ (activité ou volonté): Այսպէս, երբ կ'ըմբռնեմք, կը յիշեմք, կ'երեւակայեմք, կը գտնեմք, կ'իմաստասիրեմք, ի՞նչ կ'ընեմք, եթէ ոչ կը խորհիմք. երբ հաճոյքի կամ ցաւի տալստութիւն մը կը կրեմք, երբ սիրով, յուսով, երկիւզիւ կը յուզուինք, ի՞նչ կ'ընեմք — կ'զգամք. երբ մեր կարողութիւններն ի գործ կը վարեմք, ի գործ կը դնեմք մեր գործունէութիւնը կամ կտմք: Ապա երեք կարգ երեւութից կը վերածի գիտակցական երեւութից բաղձանութիւնը, իբր արդիւնք մարդկային հոգւոյն եռակի կարողութեանց:

4. Երեք կարողութիւնք գիրկընդխառն են և կ'ազդեն միմեանց վրայ: — Այս եռակի կարողութիւնք, թէպէտ որոշ յիւրեաց, այլ խառն են հոգեբանական կենաց իրականութեան մէջ, ի միասին միաձոյլ կը գործեն, գործելոյ համար պէտք ունին միմեանց, և կ'ազդեն ի վերայ միմեանց: Երբ մարդ կը գործէ, ո՛չ միայն կամքն է ի գործունէութեան, այլ և իմացականութիւնն ու զգացումն. պէտք է որ մարդ գիտնայ իւր գոր-

ծոյն նպատակն, գործելոյ շարժառիթքն ու գործածած միջոցներն. պէտք է նաև որ իւր զգացմամբ ալ մղուի յայն գործ: Առարկայի մը վրայ խորհելու ատենա՝ պէտք է որ կամքս ուզէ նորա վրայ կասեցունել ուշադրութիւնս, և սիրտս ալ հաճոյք մը կամ հրապոյր մը գտնէ այդ խորհրդածութեան մէջ: Հաճոյ կամ անհաճոյ տպաւորութեան մը կ'ընկերանայ գաղափարն իրին որ զայն յաւաջ բերաւ, կամ գէթ գաղափարն հաճոյից կամ ցաւի, և յաճախ գործէ մը կը ծնանի կամ գործ մը կը ծնի այդ տպաւորութիւն: Այսպէս վերլուծմամբ բաժանեալ, յերկրեալ անբաժան են մարդկային հոգւոյ կարողութիւնք, թէպէտ այս միասնաբանութիւն չեղձաներ ի նոցանէ իւրաքանչիւրին տարբերութիւնն: Անցնիւրկարողութիւն իւր որոշ հանգամանքն ունի, և ըստ չափուն որով մին կամ միւսն է տիրապետող՝ կը զանազանին նկարագիրք և նոցին երանգք: Իւրաքանչիւրն ալ կը ներգործէ ի վերայ միւս երկուց և ի նոցանէ կը ներգործուի իւր կարգին: Միտքը կամքէն կ'ստանայ յամառութիւն մտածման, հետազոտութեան, ուսման. կամքն զօրացեալ մտքի մը մէջ կը քաղէ գործելու շարժառիթներ ու լաւագոյն ուղղութիւն: Սիրտը մտաց ու կամաց կ'օժանդակէ՝ ոգեւորելով զմին և զմիւսն. յօժարութեամբ կ'զբաղի միտքն այնու որ սիրելի է և դիւրաւ կ'ըմբռնէ և կ'ուսանի զայն, և կամքն դիւրայօժար կը ձգի յայն ինչ ուր արդէն զգացմամբ կը բերուի ոք. իսկ իմացականութիւն կը կանոնաւորէ, կը սանձէ զգայնութիւնն ու կը լուսաւորէ կամքն ու կ'առաջնորդէ նմա:

Ռ. Յ. ՊԵՐՊԵՐԵԱՆ

ԿՐԹԱԿԱՆ ՇՈՒՋՈՐԿԱՌԹԻՒՆ ՄԸ

Մրագիր չափագիտական ուսմանց յազգային վարժարան:

Ինչպէս որ իւրաքանչիւր ոք գիտէ, նախնական ուսումն կ'առանգուի նախակրթարանաց մէջ. հոս ի նկատ առնելով աշակերտաց տարիքը և պէտքը, դասատուք իրաւամբ կ'առանգեն միայն գործնական թընուաբանութիւն և գործնական երկրաչափութիւն: Աշակերտք խորհելու կը վար-

ժուին թուաբանական խնդրոց լուծմամբ :

Անցնինք երկրորդական վարժարանաց : Եւրոպայի մէջ նախ իմաստասիրութիւնը և յետոյ փորձը ցցուցած են թէ այս կարգի ուսումնարաններն երկու տեսակ պարտին ըլլալ և արգարև կէս դարէ ի վեր զուգընթացաբար կը հաստատուին անոնք :

Մին կ'անուանուի երկրորդական ուսումնարան աւելի դրական քան գիտական, զոր Փրանսացիք համառօտելով կ'ըսեն Enseignement secondaire classique, ուր չափազիտական ճիւղէն կ'աւանդուին տեսական թուաբանութիւն, տեսական և դործնական գրահաշիւ, տեսական երկրաչափութիւն, անդաշափութիւն և պարզ տիեզերագրութիւն : Այս երկրորդական ուսմանց կը հետեին այն աշակերտք որք կամ յարմարութիւն և կամ զիտաւորութիւն չունին չափազիտական ասպարէզի մը հետեւելու :

Միւսն կ'անուանուի երկրորդական ուսումնարան աւելի գիտական քան գրական, զոր Փրանսացիք համառօտելով կ'ըսեն Enseignement secondaire spécial, ուր չափազիտական ճիւղէն կ'աւանդուին թուաբանութիւն, գրահաշիւ, երկրաչափութիւն, եռանկիւնաչափութիւն, տեղագծութիւն (topographie), մեքենագիտութիւն, տիեզերագրութիւն և նկարագրական երկրաչափութեան երեք առաջին գրքերը (կէտ, գիծ և անկիւն :

Երկրորդական վարժարանաց այս բաժանումը շատ օգտակար եղած է, վասն զի այն աշակերտք որք կամ յարմարութիւն և կամ զիտաւորութիւն չունէին չափազիտական ասպարէզ մը մտնելու դժկամակութեան և դատաւրութեան չար օրինակներ կ'ըլլային իրենց ընկերաց և այսպիսեաց թիւն ամէն երկրի մէջ ատուարագոյն է : Այս պատճառաւ է որ նոյն անպատեհութիւններն կը նշմարուին մեր երկրորդական վարժարանաց մէջ. մինչեւ ցայժմ մեր երկրորդական վարժարանաց երկու կարգի չ'բաժնուելուն պատճառը մանաւանդ գրական եղած է, վասն զի բաժանմամբ ծախքերն գրեթէ կրկին կ'ըլլան : Մասնաւոր դրութեամբ մը նուաստս կը կարծէ թէ կրնամք եւրոպացւոց արդիւնքին խիստ շատ մօտեանալ. այն է ի լրումն վերջընթեր տարւոյ՝ աշակերտաց վկայական բաշխել և վերջին տարին միայն չափազիտական և բնագիտական

ուսմանց սահմանելով աւանդել եռանկիւնաչափութիւն, տեղագծութիւն, մեքենագիտութիւն, տիեզերագրութիւն և նկարագրական երկրաչափութիւն : Այս կերպիւ անոնք որք չ'են ուզեր չափազիտական ասպարէզի մէջ մտնել վերջընթեր տարւոյն վերջը (bachelier ès lettres) ի վկայականն առնելով կը մեկնին վարժարանէն, իսկ մնացածները տարի մ'ալ միայն գիտութեանց աշխատելով կ'ստանան նաև (bachelier ès sciences) ի վկայականն : Այս դրութիւնն կ'առաջարկենք երկրորդական վարժարանաց պատուարժան տնօրինաց :

Ի ստորև կ'ամփոփեմք չափազիտական ուսմանց ծրագիրն :

Առաջին տրջան

Գործնական թուաբանութիւն և դործնական երկրաչափութիւն :

Երկրորդ տրջան

Տեսական թուաբանութիւն, տեսական և դործնական գրահաշիւ, տեսական երկրաչափութիւն և անդաշափութիւն :

Երրորդ տրջան

Եռանկիւնաչափութիւն, տեղագծութիւն, մեքենագիտութիւն, տիեզերագրութիւն և նկարագրական երկրաչափութիւն :

ՅԱԿՈԲ Ն. ՊՅՍՏԵԱՆ

ԱՌՆԵՔ ԵՒ ՄՏԵԾՈՒԹԻՒՆՔ

Բոնադասեցէ՛ք զմարդիկ յաշխարհիւն, եւ պարկե՛տ ու պատուաւոր պի՛տ ընէ՛ք զանոնք :

(ԱՌԹԵՐ)

Քաղաքավարութիւնը մասն է լուսաբարոյութեան ինչպէս ուղղագրութիւնը՝ ոնոյն :

(ԺԻՒԼ ԹՐՈՒՊԱ)

Առանց գրութեան առաքինութիւնը լոկացուն մ'է :

(ՆԵՒՏՈՐ)

Կեանքն յարատեւ դաստիարակութիւն մը պարտի լինել :

(Ժ. ՅԼՈՊԵՐ)

Արտօնատէր Ա. ՍԱՔԱՅԵԱՆ

Տնօրէն—Խմբագիր

ՄԻՋՐԱՆ ԱՍՔԱՆԱԶ

Տպագր. ՆՇԱՆ Կ. ՊԵՂՊԵՐԵԱՆ

Կ. Պօլիս, Էսկի Չապքիէ ճառէսի, 61.